«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
2023 թվականի հունվարի 19-ի նիստի

ՈՐՈՇՈՒՄ N 14

« ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 23.06.2022թ. ՆԻՍՏԻ ԹԻՎ 9.2 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-501-Ն օրենքի դրույթներով և «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 7-րդ ենթակետով՝ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 23.06.2022թ. նիստի թիվ 9.2 որոշումով հաստատված հաստիքացուցակում կատարել վերոնշյալ օրենքից բխող հետևյալ փոփոխությունները՝

1. Սոցիալական վճար կատարող և նվազագույն ամսական աշխատավարձի չափով վարձատրվող հաստիք զբաղեցնող բոլոր աշխատողների համար կիրառել 100.000 դրամ դրույքաչափը:
2. Սոցիալական վճար չկատարող և նվազագույն ամսական աշխատավարձի չափով վարձատրվող հաստիք զբաղեցնող բոլոր աշխատողների համար կիրառել 93.750 դրամ դրույքաչափը:
3. Հնոցապանների և դռնապահ-գիշերապահների համար 1 ժամի արժեքը՝ ներառյալ հավելավճարները, սահմանել 750 դրամ:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ